ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ԳԵՈՐԳԻ ՌՈՒՍՈՎԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7»

ք. Չարենցավան «18» 12 2025թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԼՏԵՔ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Բասենցյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Մովսես Խորենացու և Գեորգի Ռուսովի փողոցների ասֆալտապատման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **«ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7»** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է **նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից):**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 (հինգ) օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3 Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են **նախագծանախահաշվային փաստաթղթերում:**

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում, սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում, Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 (տասը)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն

պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **132900000 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 22150000 (քսաներկու միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում՝ կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը	Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները	Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն կամ ձեռք բերման պայմանագիր	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	5 օրացուցային օր	Չի տրամադրվում
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	3 օրացուցային օր	Չի տրամադրվում
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	1 օրացուցային օր	Շինարարական աղբի մասով չի տրամադրվում, կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով 1 օրացուցային օր
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի բերրի շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	2 օրացուցային օր	Չի տրամադրվում
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումն իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան լիազոր	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում

	մարմնի կողմից տրված թույլտվության դեպքերում)			
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	1 օրացուցային օր	Չի տրամադրվում
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագրի սկզբում և վերջում)	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	5 օրացուցային օր	Չի տրամադրվում
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	Նշանների մասով 3 օրացուցային օր, լուսաազդանշանային առկայծող լապտերների մասով առավելագույնը 12 ժամ	Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշանների վերականգնման համար 1 օրացուցային օր, վնասված լուսաազդանշանային առկայծող լապտերների վերականգնման համար 4 ժամ
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	1 օրացուցային օր	Չի տրամադրվում
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	5 օրացուցային օր	Չի տրամադրվում
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	1 օրացուցային օր	Չի տրամադրվում
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	4 ժամ	1 ժամ
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության Լանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	2 ժամ	Չի տրամադրվում

	պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)			
14	Շինարարական սորուն նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Տուգանք՝ պայմանագրային գնի 0.5 %-ի չափով	24 ժամ	4 ժամ

Ընդ որում, սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսից, իսկ առավելագույնը՝ 1 (մեկ) տոկոսից: Պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցների աղյուսակում նշված բոլոր խախտումների համար տուգանքի տոկոսների հանրագումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 10 (տաս) տոկոսը, իսկ 10 (տաս) տոկոսը գերազանցելու դեպքում՝ պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի

կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է **19 (տասնինը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, հա մարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան	**«ԱԼՏԵՔ» ՍՊԸ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	**Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 13 փողոց, 9/1**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900132172017, 900132000143	**Հ/Հ 220463333041000**
ՀՎՀՀ 03022497	**ՀՎՀՀ 00901356**
	Էլ. փոստ՝ altechwin@gmail.com
	Հեռ. (+37441) 55-30-61, (+37494) 20-25-60
Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան	**Տնօրեն՝ Ա. Բաւենցյան**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 1
«18» 12 2025 թ. կնքված
«ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Մովսես Խորենացու և Գեորգի Ռուսովի փողոցների ասֆալտապատման աշխատանքների կատարման

հազար ՀՀ դրամ

Հ/հ	Գնի հիմքը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
		Ռուսովի փողոց				
		Հողային աշխատանքներ				
1	շուկա	Ա/բետոնե ծածկույթի ֆրեզում միջինը h=5սմ շերտով հանձնելով սեփականատիրոջը	մ2	6088.6	0.438	2665.23
2	1-1539	Ֆրեզված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.30443	499.304	152.00
3	Գ-130-7	Ֆրեզված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	608.86	0.505	307.76
4	1-1613 1-1619	Ճանապարհի ծածկույթի և հողային պաստառի կտրում բուլդոզերով տեղափոխելով մինչև 30մ կուտակումով	1000մ3	1.46126	568.666	830.97
5	1-1611 1-1617	Կուտակված բերվածքների և աղբի հավաքում մեխանիզմով	1000մ3	0.015	316.474	4.75
6	1-1539	Կուտակված հանույթի ու հավաքված բերվածքների և աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	1.4763	499.304	737.12
7	Գ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	2657.34	0.505	1343.22
8	1-1611 1-1617	Տեղափոխված հանույթի ու հավաքված բերվածքների և աղբի փռում աղբավայրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 40մ փռելով	1000մ3	1.4763	316.474	467.21
9	16-60 Գ-0.5	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում հանձնելով համայնքին	մ	534.85	0.716	383.12
10	1-968	Քանդված եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ3	24.1	1.499	36.12
11	Գ-130-7	Քանդված եզրաքարերի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	60.25	0.505	30.45
12	1-1130	Ճանապարհային պաստառի հարթեցում բուլդոզերով	100մ2	60.886	1.844	112.26
13	1-1183	Ճանապարհային պաստառի վերին շերտի տոփանում մեխանիզմով	100մ2	60.886	7.747	471.67
14	1-1187	Տոփանված բնահողի ջրում	100մ2	60.886	0.783	47.65
		Երթևեկելի մաս				
1	27-20	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ ԳՈՒS 25607-2009	մ3	608.86	8.459	5150.18
2	27-38 10-1	Խճավազային նախաշերտի իրականացում C5, h=15սմ ԳՈՍ 25607-2009	100մ2	60.886	155.573	9472.19
3	27-251 63-1 կիր.	Հիմքի C-5 մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով/1մ2-0.6լ ԳՈՍ 58192-2009 1-2020	տն	3.836	266.365	1021.78
4	27-164-2 27-165-2	Խոշորահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ2	60.886	484.048	29471.74

5	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /40մմ/	100մ2	60.886	431.359	26263.70
		Օվալաձև հանգույց				
1	27-86	Օվալաձև հանգույցի բազալտե եզրաքարերի տեղադրում /150*300մմ կտրվածքով/ բետոնե հիմքի վրա	100 գծմ	0.331	1330.49	440.39
		Մայթ				
1	1-1613 1-1619	Մայթի պատվածքի կազմաքանդում բուլդոզերով տեղափոխելով մինչև 30մ կուտակումով	1000մ3	0.10304	568.666	58.60
2	1-1539	Կուտակված հանույթի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.10304	499.304	51.45
3	Գ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում ավտոինքնաթափով աղբավայր 7կմ հեռ.	տն	185.472	0.505	93.75
4	5-64	Ավազի նախաշերտի իրականացում 7 սմ հաստության	մ3	50.40	15.196	765.85
5	շուկա	Ց/ավազե չոր շաղախ 3սմ հաստության	մ3	21.60	40.151	867.27
6	5-111	Բետոնե գունավոր սալիկներով ծածկույթի իրականացում 60մմ, կարերի լցմամբ ց/ա շաղախով	մ2	720.00	6.990	5032.84
7	27-86	Բազալտե եզրաքարերի տեղադրում /150*300մմ կտրվածքով/ բետոնե հիմքի վրա	100 գծմ	5.3485	1330.49	7116.11
8	6-90	Միաձույլ բետոնե եզրաշարի իրականացում 100*200մմ կտրվածքով B-20 դասի բետոնով /534.85մ/	մ3	21.40	60.825	1301.66
		Դիտահորերի կափարիչների նիշի բարձրացում և նորերի տեղադրում				
1	7-241 Գ-0.4	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում բարձելով ա/ինքնաթափին /հանձնելով սեփականատիրոջը/	հատ	15	3.661	54.92
2	Գ-130-7	Ապամոնտաժված ե/բ դիտահորերի կափարիչների տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	8.60	0.505	4.35
3	6-90	Հավաքովի ե/բ դիտահորի նիշի բարձրացում բետոնով B-12.5 մակնիշի	մ3	3.6	55.420	199.51
4	7-241 Գ-0.8	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200*1200մմ թուջե մտոցով	հատ	15	131.820	1977.30
		Անձրևատար հորի տեղադիրքի փոխում /1 հատ/				
1	23-109	Հավաքովի ե/բ հորի ապամոնտաժում 60*80սմ, H=90սմ /1 հատ/ տեղադիրքի փոխման նպատակով	մ3	0.43	43.695	18.79
2	11-6	Խճի նախաշերտ դիտահորերի տակ 100մմ հաստության	մ3	0.13	17.816	2.32
3	11-11	Դիտահորի հատակի բետոնե նախաշերտ B 15 մակնիշի 10սմ հաստության	մ3	0.10	50.412	5.04
4	23-109	Հավաքովի ե/բ հորի վերատեղադրում 60*80 սմ, H=90սմ /1 հատ/	մ3	0.43	61.831	26.59
5	8-27	Դիտահորի արտաքին մասերի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 շերտ	100մ2	0.05	113.558	5.68
		Վաքերի տեղադրում				
1	1-1588	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ3	0.16641	864.884	143.93
2	Գ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում	տն	299.54	0.505	151.41

		ավտոինքնաթափով 7կմ հեռ.				
3	5-64	Վաքի նախաշերտ ավազակոպիճից 10 սմ հաստությամբ	մ3	33.28	11.621	386.75
4	27-13	Հավաքովի ե/բ վաքերի տեղադրում /554.7գծմ/ 34*30սմ	մ3	30.51	33.315	1016.43
5	շուկա	Հավաքովի ե/բ վաքերի արժեքը 34*30սմ, 554.7 / 3	հատ	185	36.589	6768.97
6	8-27	Վաքի թիկունքային մասի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 շերտ	100մ2	5.29	113.558	600.72
7	8-61	Պողպատե ճաղաշարի տեղադրում	տն	3.899	131.181	511.48
8	շուկա	Պողպատե անկյունակի արժեքը L70*70*6	մ	227.2	3.055	694.00
9	շուկա	Պողպատե շվելլերի արժեքը N 6.5	մ	414.64	2.044	847.47
10	15-614	Պողպատե ճաղավանդակի յուղաներկում 2 շերտ	100մ2	1.041	177.712	185.00
		Գծանշում				
1	27-248	Ճանապարհի գծանշում /հոծ գիծ/ գծանշման ներկով, /լուսաանդրադարձիչ գնդիկներով/ «1.2» տիպի, 0.1 մ լայնությամբ	1կմ	0.50325	166.098	83.59
2	27-249	Փողոցի երթևեկելի մասի ընդհատվող գծանշում ճանապարհային ներկով, /լուսաանդրադարձիչ գնդիկներով/ «1.5» տիպի 1/3 հարաբերությամբ, 0.1 մ լայնությամբ	1կմ	0.3336	63.392	21.15
		Մովսես Խորենացու փողոց				
		Հողային աշխատանքներ				
1	շուկա	Ա/բետոնե ծածկույթի ֆրեզում միջինը h=5սմ շերտով հանձնելով սեփականատիրոջը	մ2	2520.0	0.438	1103.11
2	1-1539	Ֆրեզված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.126	499.304	62.91
3	Գ-130-7	Ֆրեզված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	252.00	0.505	127.38
4	1-1613 1-1619	Ճանապարհի ծածկույթի և հողային պաստառի կտրում բուլդոզերով տեղափոխելով մինչև 30մ կուտակումով	1000մ3	0.6768	568.666	384.87
5	1-1539	Կուտակված հանույթի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.6768	499.304	337.93
6	Գ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	1218.24	0.505	615.79
7	1-1611 1-1617	Տեղափոխված հանույթի փռում աղբավայրում մեխանիզմով տեղափոխելով մինչև 40մ փռելով	1000մ3	0.6768	316.474	214.19
8	16-60 Գ-0.5	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում հանձնելով համայնքին	մ	196.55	0.716	140.79
9	1-968	Քանդված եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	մ3	8.84	1.499	13.25
10	Գ-130-7	Քանդված եզրաքարերի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	22.10	0.505	11.17
11	1-1130	Ճանապարհային պաստառի հարթեցում բուլդոզերով	100մ2	28.20	1.844	52.00
12	1-1183	Ճանապարհային պաստառի վերին շերտի տոփանում մեխանիզմով	100մ2	28.20	7.747	218.46
13	1-1187	Տոփանված բնահողի ջրում	100մ2	28.20	0.783	22.07
		Երթևեկելի մաս				
1	27-20	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ ԳՈՍՏ 25607-2009	մ3	282.00	8.459	2385.36

2	27-38 10-1	Խճավազային նախաշերտի իրականացում C5, h=15սմ ԳՈՍՏ 25607-2009	100մ2	28.200	155.573	4387.15
3	27-251 63-1 կիր.	Հիմքի C-5 մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով/1մ2-0.6լ ԳՈՍՏ 58192-2009 1-2020	տն	1.777	266.365	473.33
4	27-164-2 27-165-2	Խոշորահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ	100մ2	28.20	484.048	13650.15
5	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /40մմ/	100մ2	28.20	431.359	12164.31
		Մայթ				
1	1-1613 1-1619	Մայթի պատվածքի կազմաքանդում բուլդոզերով տեղափոխելով մինչև 30մ կուտակումով	1000մ3	0.05255	568.666	29.88
2	1-1539	Կուտակված հանույթի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով 1.0մ3 շերեփի տարողությամբ	1000մ3	0.05255	499.304	26.24
3	Գ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում ավտոինքնաթափով աղբավայր 7կմ հեռ.	տն	94.594	0.505	47.81
4	5-64	Ավազի նախաշերտի իրականացում 7 սմ հաստության	մ3	22.992	15.196	349.38
5	շուկա	Ց/ավազե չոր շաղախ 3սմ հաստության	մ3	9.854	40.151	395.65
6	5-111	Բետոնե գունավոր սալիկներով ծածկույթի իրականացում 60մմ, կարերի լցմամբ ց/ա շաղախով	մ2	328.45	6.990	2295.88
7	27-86	Բազալտե եզրաքարերի տեղադրում /150*300մմ կտրվածքով/ բետոնե հիմքի վրա	100 գծմ	1.9655	1330.49	2615.07
8	6-90	Միաձույլ բետոնե եզրաշարի իրականացում 100*200մմ կտրվածքով B-20 դասի բետոնով	մ3	3.713	60.825	225.84
		Դիտահորերի կափարիչների նիշի բարձրացում և նորերի տեղադրում				
1	7-241 Գ-0.4	Հավաքովի ե/բ դիտահորերի կափարիչների ապամոնտաժում բարձելով ա/ինքնաթափին /հանձնելով սեփականատիրոջը/	հատ	10	3.661	36.61
2	Գ-130-7	Ապամոնտաժված ե/բ դիտահորերի կափարիչների տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	5.73	0.505	2.90
3	6-90	Հավաքովի ե/բ դիտահորի նիշի բարձրացում բետոնով B-12.5 մակնիշի	մ3	2.4	55.420	133.01
4	7-241 Գ-0.8	Հավաքովի ե/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200*1200մմ թուջե մտոցով	հատ	10	131.820	1318.20
		Վաքերի տեղադրում				
1	1-1588	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձելով ինքնաթափին	1000մ3	0.10583	864.884	91.53
2	Դ-130-7	Քանդված հանույթի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ.	տն	190.45	0.505	96.27
3	5-64	Վաքի նախաշերտ ավազակոպիճից 10 սմ հաստությամբ	մ3	21.17	11.621	246.02
4	27-13	Հավաքովի ե/բ վաքերի տեղադրում /352.75գծմ/ 34*30սմ	մ3	19.40	33.315	646.30
5	շուկա	Հավաքովի ե/բ վաքերի արժեքը 34*30սմ, 352.75 / 3	հատ	118	36.589	4317.50
6	8-27	Վաքի թիկունքային մասի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 շերտ	100մ2	5.29	113.558	600.72
7	8-61	Պողպատե ճաղաշարի տեղադրում	տն	1.258	131.181	165.03
8	շուկա	Պողպատե անկյունակի արժեքը L70*70*6	մ	73.3	3.055	223.90

9	շուկա	Պողպատե շվելլերի արժեքը N 6.5	մ	133.77	2.045	273.59
10	15-614	Պողպատե ճաղավանդակի յուղաներկում 2 շերտ	100մ2	0.336	177.712	59.71
		Գծանշում				
1	27-248	Ճանապարհի գծանշում /հոծ գիծ/ գծանշման ներկով, /լուսաանդրադարձիչ գնդիկներով/ «1.2» տիպի, 0.1 մ լայնությամբ	1կմ	0.3315	166.098	55.06
2	27-249	Փողոցի երթևեկելի մասի ընդհատվող գծանշում ճանապարհային ներկով, /լուսաանդրադարձիչ գնդիկներով/ «1.5» տիպի 1/3 հարաբերությամբ, 0.1 մ լայնությամբ	1կմ	0.0512	63.392	3.25
ԸՆԴԱՄԵՆԸ						**159022.02**
ԱԱՀ 20%						**31804.40**
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ						**190826.42**

Կապալառուն աշխատանքները կատարում է Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքում:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132172017, 900132000143
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԼՏԵՔ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 13 փողոց, 9/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220463333041000
ՀՎՀՀ 00901356
Էլ. փոստ՝ altechwin@gmail.com
Հեռ. (+37441) 55-30-61, (+37494) 20-25-60

Տնօրեն՝ Ա. Բասենցյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
«18» 12 2025թ. կնքված
«ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Մովսես Խորենացու և Գեորգի Ռուսովի փողոցների ասֆալտապատման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր
2	Հողային աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր
3	Ճանապարհային պատվածք	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր
4	Կողնակներ	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր
5	Ջրթող խողովակներ	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր
6	Ջրահեռացման վաքեր	Պայմանագրի կնքման օրվանից սկսած (աշխատանքների մեկնարկը տրվելու է 2026 թվականի մարտի 01-ից)	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ 122 օրացուցային օր

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132172017, 900132000143
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան
____
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԼՏԵՔ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 13 փողոց, 9/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220463333041000
ՀՎՀՀ 00901356
Էլ. փոստ՝ altechwin@gmail.com
Հեռ. (+37441) 55-30-61, (+37494) 20-25-60

Տնօրեն՝ Ա. Բասենցյան
____
(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 3
«18» 12 2025 թ. կնքված
«ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/7» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187/5	Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Մովսես Խորենացու և Գեորգի Ռուսովի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	0	0	0	132900000	132900000	132900000	132900000	132900000	132900000	132900000	132900000	132900000	132900000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների:

Սույն գնման գործընթացը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ֆինանսավորումն իրականացվելու է համայնքային (65 %) և պետական (35 %) բյուջեներից՝ համապատասխան մասնաբաժիններով: Աշխատանքների կատարման դիմաց վճարումներն իրականացվելու են սկզբում համայնքային բյուջեի մասնաբաժնի չափով, այնուհետև աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումը հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո՝ պետական բյուջեի մասնաբաժնի չափով:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132172017, 900132000143
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԼՏԵՔ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 13 փողոց, 9/1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220463333041000
ՀՎՀՀ 00901356
Էլ. փոստ՝ altechwin@gmail.com
Հեռ. (+37441) 55-30-61, (+37494) 20-25-60

Տնօրեն՝ Ա. Բաանեցյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
«   »   20   թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _________________-ի
Պատվիրատուի անունը   Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20   թ. __________________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը   պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
______________________ ազգանուն, անուն	______________________ ազգանուն, անուն
______________________ ստորագրություն	______________________ ստորագրություն

Հավելված N 5
«   »   20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ___________________-ի և _____________________-ի միջև «--»   20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը   կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և
___________________-ի   միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

____
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20 թ.